ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ
29 նոյեմբերի 2019 թ., ԿԽ-010/19/3

«Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության ունկնդիրներին տարկետում տրամադրելու կարգը հաստատելու վերաբերյալ

Ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, 17-րդ հոդվածի 3-րդ մասի, ««Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 21.11.2013 թվականի N 1340-Ն որոշման հավելվածի 19-րդ կետի 14-րդ և 17-րդ ենթակետերի պահանջներով՝ Խորհուրդը

Որոշեց

Հաստատել «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության ունկնդիրներին տարկետում տրամադրելու կարգը՝ համաձայն հավելվածի:

Խորհրդի նախագահ՝ ***Ա. Հարությունյան***

Հավելված
Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի 2019 թվականի
նոյեմբերի 29-ի թիվ ԿԽ-010/19/3 որոշման

Նախագահ _____ *Ա. Հարությունյան*

ԿԱՐԳ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻՆ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) կանոնակարգվում են «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում (այսուհետ՝ Ակադեմիա) մասնագիտական պատրաստում անցնող դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում, դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց (այսուհետ՝ Ունկնդիր) տարկետում տրամադրելու հարաբերությունները:

2. Ունկնդրին տարկետում տրամադրելու հարցը, Ակադեմիայի ռեկտորի ներկայացմամբ, քննարկում և լուծում է Ակադեմիայի կառավարման խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ):

II. ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ

3. Ունկնդրին տարկետում տրամադրելու հիմքերն են՝

1) ժամանակավոր անաշխատունակության հանգեցնող հիվանդությունը, որն անհնար է դարձնում մասնակցությունը տվյալ մասնագիտական պատրաստմանը.
2) հղիությունը և ծննդաբերությունը.
3) մինչև երեք տարեկան երեխայի խնամքը:

4. Կարգի 3-րդ կետում նշված հանգամանքները հիմնավորող փաստաթղթերն են՝

1) ժամանակավոր անաշխատունակության թերթիկը.
2) հղիության մասին տեղեկանքը.
3) երեխայի ծննդյան վկայականը.
4) մինչև երեք տարեկան երեխային որդեգրման վկայականը:

III. ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼԸ

5. Տարկետման իրավունքից օգտվելու համար Ունկնդիրը դիմում է ներկայացնում Ակադեմիայի ռեկտորին:

6. Դիմումը ներկայացվում է գրավոր և պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

1) դիմողի անունը, հայրանունը, ազգանունը.
2) դիմողի բնակության վայրը.
3) դիմողի հեռախոսահամարը.
4) տարկետման իրավունքի հայցման հիմքը.
5) տարկետման իրավունք ստանալու հիմք հանդիսացող հանգամանքները հավաստող փաստաթղթերի ցանկը.
6) մինչև երեք տարեկան երեխայի խնամքի տարկետման նախընտրելի ժամանակահատվածը.
7) դիմողի ստորագրությունը.
8) դիմումը ներկայացնելու ամսաթիվը, ամիսը, թվականը:

7. Դիմումին կցվում են Կարգի 4-րդ կետում թվարկված փաստաթղթերը:

8. Դիմումը և դրան կից փաստաթղթերն ուսումնասիրվում են Ակադեմիայի դատական համակարգի ունկնդիրների ուսուցման կազմակերպման բաժնում (դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկված անձանց մասով) կամ դատախազական և քննչական համակարգի ունկնդիրների ուսուցման կազմակերպման բաժնում (դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասով):

9. Դիմումի և դրան կից փաստաթղթերի ուսումնասիրությունը կատարվում է դիմումը և դրան կից փաստաթղթերը Ակադեմիա մուտքագրվելու օրից 3-օրյա ժամկետում:

10. Դիմումին կից փաստաթղթերը թերի ներկայացվելու դեպքում Ունկնդրին հնարավորություն է տրվում 3-օրյա ժամկետում ներկայացնել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

11. Ուսումնասիրության ավարտից հետո ուսումնասիրության արդյունքները ներկայացվում են Ակադեմիայի ռեկտորին:

12. Ակադեմիայի ռեկտորը Ունկնդրի՝ տարկետում ստանալու հարցը 3-օրյա ժամկետում ներկայացնում է Խորհրդի քննարկմանը:

13. Ունկնդրին տարկետում տրամադրելու հարցը քննարկվում է Խորհրդի նիստում:

14. Խորհուրդը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) Ունկնդրին տարկետում տրամադրելու մասին.
2) Ունկնդրին տարկետում տրամադրելը մերժելու մասին:

15. Խորհուրդը որոշում կայացնում է «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով սահմանված կարգով:

16. Կարգի 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հիմքով Ունկնդրին տրամադրվում է տարկետում մինչև համապատասխանաբար դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում կամ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց հաջորդ մասնագիտական պատրաստումը:

17. Կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված հիմքով Ունկնդրին տրամադրվում է տարկետում՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի համար օրենսդրությամբ սահմանված ժամկետներով:

18. Կարգի 3-րդ կետի 3-րդ ենթակետերով նախատեսված հիմքով Ունկնդրին տրամադրվում է տարկետում մինչև համապատասխանաբար դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում կամ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց հաջորդ մասնագիտական պատրաստումը՝ երեխայի խնամքի արձակուրդի համար օրենսդրությամբ սահմանված ժամանակահատվածով երկարաձգելու հնարավորությամբ:

IV. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

19. Կարգի 14-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով:

20. Կարգի 3-րդ կետի 2-3-րդ ենթակետերով նախատեսված տարկետում տրամադրելու հիմքերը վերանալու դեպքերում Ունկնդիրն այդ մասին պարտավոր է տեղեկացնել Ակադեմիայի դատական համակարգի ունկնդիրների ուսուցման կազմակերպման բաժնին (դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկված անձանց մասով) կամ դատախազական և քննչական համակարգի ունկնդիրների ուսուցման կազմակերպման բաժնին (դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասով):

21. Ունկնդրին տարկետում տրամադրելու վերաբերյալ Խորհրդի որոշումը ներկայացվում է ՀՀ բարձրագույն դատական խորհուրդ (դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկված անձանց մասով) և ՀՀ գլխավոր դատախազին (դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասով):